

կոահելով վեճի լրջությունն ու բանավիճելու համապատասխան անհրաժեշտությունը, խնդրում է Բարսեղին, որպես իրեն օգնական, թույլ տալ՝ մասնակցելու մրցավեճին:

Բուզանդի մի սրամիտ դիտողությունը մեզ հուշում է, թե ինչպես է ավարտվում հիշյալ բանավեճը. «Ապա զղջացաւ թագաւորն՝ թէ ընդէ՞ր զԲարսիլիոսն հրամայեցին օժանդակ բնաւ եւսեքի թողուլ ի ներքս: Ապա յոտն կացեալ ամօթով արիանոսքն ասացին զթագաւորն...»¹:

Ակզբնաղբյուրում եկեղեցական որևէ խնդրի առնչմամբ ընդունված է Բարսեղ Կեսարացուն, Գր. Նազիազանցուն և Գր. Նյուսացուն միասին հիշատակել, նրանց բյուզանդական գրական մասնագետները կոչում են «երեք մեծ կապաղովկիացիներ»: Կապաղովկիայի 3 նշանավոր գործիչների վկայակոչման նույն մոտեցումը առկա է նաև Խորենացու մոտ, սակայն նշենք, որ քննական տեքստում «Բարսեղ» անվան փոխարեն «Վեղասիոս» է օգտագործված: Խորենացու այն վկայությունը, թե Պապը Ներսես Մեծի աթոռակալ նշանակեց Սահակին՝ «առանց մեծի արքեպիսկոպոսին Կեսարու», հարկավ, վերաբերում է Բարսեղ Կեսարացուն:

Բարսեղ Կեսարացուց օգտվել են Անանիա Մոկացի կաթողիկոսը, Ներսես Շնորհալիին և այլք:

Կեսարացու մատենագրական ժառանգությունը և «Վեցօրեան»: Հարուստ ու բազմաբովանդակ է Բարսեղ Կեսարացու մատենագրական ժառանգությունը: Մինեի հայտնի հրատարակությամբ այն կազմում է 4 մեծադիր հատոր: 1297 թ. ընդօրինակված համար 5595 ձեռագիր ժողովածուի մի հիշատակարանը հուշում է, որ դեռևս միջնադարում փորձ է արվել թեմատիկ բաժանմամբ խմբավորելու Կեսարացու մատենագրական ժառանգության հայտնի մասը: Հիշյալ ձեռագրի պարունակությունն են «Վեցօրեան», «Գիրք հարցողացը», բազում քարոզներ, ճառեր, մեկնություններ, թղթեր՝ ուղղված եվսեբիոս Կեսարացուն, Գր. Նազիազանցուն և ժամանակի նշանավոր այլ անձանց: Ենթադրվում, որ Կեսարացու ոչ բոլոր գործերն են հասել մեզ, հատկապես Կեսարացու և Գր. Նազիազանցու կազմած «Ս. Գիրքը և նրա մեկնաբանը (Օրիգենեսը)» ձեռնարկ-ժողովածուն:

Գրչագրերում շատ տարածված է «Տեսութիւն յաղագս հաւատոյ՝ երանելեացն սրբոյ եպիսկոպոսաց Բարսղի և Գրիգորի» խորագրով գործը: Այն դիտվում է որպես Բ. Կեսարացու և Գր. Նազիազանցու աշխատասիրություն:

Օրինաչափ է, որ հայ գրերի ստեղծումից հետո Մեսրոպ Մաշտոցն ու իր աշակերտները ձեռնամուխ եղան Բարսեղ Կեսարացու երկերի թարգմանությանը ոսկեղենիկ գրաբարով:

Փիլիսոփայական և բարոյախրատական ծով նյութ է ամբարված նրա ճառերում: ճառերում զգալի է Կեսարացու խոր մարդասիրությունը: Կեսարացին մարտնչում է անաղարտ մարդու և մարդկային անբասիր հարաբերությունների համար: Նա ցույց է տալիս մարդկային արատները և դրանց խոտելի կողմերը: Ըստ նրա՝ չարիքի արմատը արծաթասիրությունն է, որի պատճառով մարդիկ անտանելի զրկանքներ են կրում, շահամոլ ու ինքնասեր դառնում: «Իսկ դու,- գրում է նա,- առ ոսկին հայիս եւ զեղբայրն ոչ տեսանես...»²:

Առանձին ճառերում քննվում են նպատակաուղղված հարցեր: «զՎաշխողաց» ճառը հետաքրքրական է այն առումով, որ այստեղ մանրամասն քննվում է նյութական անապահով դրությամբ պայմանավորված բազմաթիվ չարիքների գոյությունը: Դրանցից ամենամասնատանելին օտարության մեկնելն է: Կեսարացին ցույց է տալիս իրականությունը և պատվիրում հրաժարվել օտար դուռ գնալու մտքից, քանի որ այն դժբախտության ակունք կարող է հանդիսանալ. «Մի երթեսցես յօտար դուրս, քանզի ջրիոր արդարև նեղ է օտարոտիս. լաւագոյն է առ փոքր խորհուրդս զձեռն մխիթարել, քան միանգամայն ամբառնալ օտարոտիւքն եւ զկնի ամենեցուն ի միասին ի գոյիցն մերկանալ»³:

¹ Փավստոս Բուզանդ, էջ 154-156:

² Տես Մուրադյան Կ., Բարսեղ Կեսարացին և նրա «Վեցօրեան» հայ մատենագրության մեջ, էջ 62:

³ Նույն տեղում, էջ 63:

Կեսարացին բարոյական դաստիարակչական հարցադրումներ է առաջ քաշում «Ձբարկացողաց» ճառում: Բարկությունը միշտ էլ հատուկ է եղել մարդուն: Բայց խորամուխ լինելու դեպքում տեսնում ենք բարկության ծնած չարիքները, քանի որ կարող է ողբերգական հետևանք ունենալ. «քանզի բարկութիւն յատուցանէ զթշնամանս եւ թշնամանքն ծնանին զկռիւ, իսկ կռիւն զհարուածս եւ հարուածքն զվէրս, իսկ ի վիրացն բազում անգամ մահք»¹:

Կեսարացու համոզմամբ՝ բարկության պատճառով առաջ եկող չարիքները «ողջախոհութեան օրինակ» չունենալու կամ պակասի հետևանք են: Բայց բարկության խնդրից առավել չարիք ծնողը նախանձի, չարակամության երևույթն է, որի մասին խոսվում է «զՄախանաց» ճառում: Նախանձը, Կեսարացու համոզմամբ, հաճախ պատերազմների պատճառ է հանդիսանում: Նախանձը դիտվում է որպես մահաբեր հիվանդություն, «ապականութիւն կենաց, ժանդախտ բնութեանց, թշնամի յաստուծոյ տուեցելոցն մեզ, ընդդիմակ առ աստուած»²:

Կեսարացին անգամ նախանձով լեցուն մարդու դեմքի մանրամասներն է նշում. «Աչք այնպիսեացն ցամաք եւ անպայծառք, այտք՝ տխուրք, յօնք ի վայր անկեալք, ոգին՝ ախտին ամբոխեալ...»³:

Կեսարացու մատենագրական ժառանգությունը ահա այսպիսի ընդգրկում ու հետաքրքրություն ունի: Նմանատիպ ուսանելի ճառերը բազմաթիվ են՝ «Սահմանք կրանաւորականք», «Յաղագս սուրբ երրորդութեան», «Հայեա՛ ի քեզ», «Ի սկզբանէ էր բանը», «Ի ծնունդ Փրկչին», «Յաղագս գոհութեան», «Խաւսք-յորդորականք ի մկրտութիւն»: Բացի ճառերից՝ Կեսարացուն են վերագրում մի շատ հետաքրքիր աշխատություն՝ «Հարցումն ճգնաւորաց, պատասխանի սրբոյ Բարսղի՝ հարցաւոց», ընդունված է անվանել «Գիրք հարցողաց»:

Կեսարացու մատենագրական ողջ ժառանգության մեջ իր բացառիկ տեղն ու նշանակալից դերն ունի «Ճառք վասն Վեցօրեայ արարչութեան» կամ, ինչպես ընդունված է գիտական գրականության մեջ, «Վեցօրեայ» երկասիրությունը:

1830 թվականին Վենետիկում հրատարակվում է հիշյալ երկասիրությունը: Միֆթարյանների այս հրատարակությունը խթան հանդիսացավ այս հանճարեղ մատենագրի՝ Կեսարացու կյանքի ու գործունեության ուսումնասիրության համար:

«Վեցօրեայի» հրատարակումից ընդամենը վեց տարի անց՝ 1836 թվականին, Կեսարացու ողջ մատենագրական ժառանգության թարգմանության մասին գնահատանքի խոսք ասվեց «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի» առաջաբանում: Բառարանագիրները, իբրև սկզբնաղբյուր հաճախ օգտագործելով Կեսարացու բազում ճառեր, առանձին թղթեր և «Վեցօրեայ» երկասիրությունը, նկատում են, որ դրանք զգալի մասով V դարի թարգմանություններ են⁴:

Մի շարք ուսումնասիրողներ անդրադարձել են «Վեցօրեային» տարբեր տեսանկյունները՝ Գ. Ջարբհանայան, Ա. Սուբրյան, Ն. Բյուզանդացի, Ա. Նազարեթյան: Հայագիտական հետազոտությունների մեջ հետաքրքրական է Հ. Թորոսյանի «Անանիա Շիրակացին և Արարատ թերթին մեկ յաւելուածն» խորագրով աշխատասիրությունը, որտեղ բազմաթիվ հարցերի կողքին Կեսարացու «Վեցօրեայի» ազդեցության խնդիրը:

Հեղինակը համադրում է Շիրակացու որոշ գործեր Կեսարացու «Վեցօրեայ» ճառերի հայերեն թարգմանությանը և նկատում, որ Շիրակացու աստղագիտական գործերի, մասնավորապես «Յաղագս երկրի» աշխատության հիմնական աղբյուրը «Վեցօրեան» է:

Նշենք նաև, որ «Վեցօրեայի» հետ աղբյուրներ է բացահայտում Ն. Ադոնցը: Ադոնցի կարծիքով եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոցը» սերտորեն կապված է «Վեցօրեայի» հայերեն թարգմանությանը:

¹ Մուրադյան Կ., նշվ. աշխ., էջ 67:

² Նույն տեղում, էջ 68:

³ Նույն տեղում, էջ 68:

⁴ Տես «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի», հ. Ա, Երևան, 1979, էջ 8-10:

«Վեցօրեան» Կեսարացու փիլիսոփայական մտքի խորության խտացումն է, որ իր մեջ հրաշքի տարրեր է պարունակում: «Վեցօրեայի» ստեղծագործական պատմությունը հետաքրքրական մի տեղեկություն է պարունակում, որ պահպանվել է Մատենադարանի համար 4150 գրչագրում. Կեսարացին «որպես էառ հրամանն ի տեսեան գրել գվեցաւրեայ արարածս, անդէն, ասեն, ի լերինն զհինգ աւր արար զքննութիւն Վեցաւրէին, ի տուէ եւ ի գիշերի, եւ յայլոց լուաք, թէ յորժամ դարձան ի քաղաքն, յայնժամ սկսաւ նա գրել զմատենանս սուրբ, ու յորժամ վճարեաց լի եւ առատ վարդապետութեամբ մինչ յսկիզբն լինելութեան մարդոյն եւ խոստացաւ ասելով, թէ տացէ ինձ կենաց ժամանակ, որ տուողն է ամենայնի, ունիմ ասել լիով եւ վասն մարդոյն կազմութեան եւ բնութեան: Եւ հիւանդոտ գոլով մարմնով եւ բազմահոգ որ եղև յայն ժամանել, այլ վերափոխեցաւ առ Քրիստոս եւ յետ մահուան նորա ելից զայն պակասութիւն անդրանիկ հարազատ նորա Գրիգոր Նիւսացի»:

Այս տեղեկությունից և եղած տվյալներից եզրակացվում է, որ Կեսարացին իր գլուխգործոցն ավարտել է մահվանից քիչ առաջ, քանի որ մեկ այլ գործ էլ է ցանկացել ձեռնարկել, որը բովանդակության իմաստով, լինելու էր «Վեցօրեայի» շարունակությունը, սակայն վաղահաս մահը կանխել է ծրագիրը: Հիմք ունենալով այն հանգամանքը, որ Կեսարացին մահացել է 379 թվականի հունվարին, հետևաբար «Վեցօրեայի» ավարտման մոտավոր ժամանակ պետք է համարել 378 թվականը: «Վեցօրեայի» յոթերորդ ճառում առկա է «վասն տկարութեան մարմնոյ իմոյ» արտահայտությունը, որ ևս մեկ փաստ է:

Այս երկասիրությունը շարադրելիս Կեսարացին (իր իսկ վկայությամբ) օգտվել է զանազան սկզբնաղբյուրներից, ամենից առաջ Սուրբ Գրքից՝ հունարեն և եբրայերեն խմբագրություններով, որտեղից էլ կատարում է բազմաթիվ վկայակոչումներ: Կեսարացու դատողությունների գլխավոր հիմքն ու ելակետը Սուրբ Գիրքն է, ուստի նա հավաստիացնում է, թե «ի մեր բանքս չիք ինչ մտացածին ստայոթ, վասն զի գաստուած դնենք պատճառս ամենայնի»¹:

«Վեցօրեայում» քննվում են կարևոր փիլիսոփայական խնդիրներ: Կեսարացին անդրադառնում է բազմիցս քննարկված չարի և բարու ըմբռնմանը՝ կատարելով ուրույն եզրահանգումներ: Նա խստիվ մերժում է այն միտքը, թե «կենդանի է չարն բնութեամբ»: Կեսարացին չարիքի էական բացատրություններ է տալիս՝ առաջադրելով երկու կարևոր հարց. ա. չարիքը աստվածային չէ, և բացառվում է դրա գոյությունը մարդկային միջավայրից դուրս. բ. մարդը չարիք է գործում «ի ծուլութենէ»:

Անգամ բուսականության անհատական աշխարհն է ամենայն ուշադրությամբ քննվում և վերջինիս շատ գաղտնիքներ բացահայտվում: Այս ամենից զատ՝ պատմա-աշխարհագրական տեղեկություններ են հանդիպում Հին Արևելքի մասին:

«Վեցօրեայում» թեև ոչ ընդարձակ, բայց կարևոր տեղեկություններ են ամփոփված ժամանակի հասարակության բարքերի, նախասիրությունների, սովորույթների ու բարոյական ըմբռնումների մասին: Կեսարացին գուսանական երգ-երաժշտությունը «պատիր արուեստ» է համարում:

Որոշակի տեղեկություններ կան նաև ժողովրդական տոնախմբությունների մասին. Կեսարացին որևէ անուն չի նշում, բայց նկարագրություններից երևում է դրանց ընդհանուր ճանաչումը, որ ուղեկցվում էր երգ-երաժշտությամբ ու բացօդյա հանդեսներով: Կեսարացին չի շրջանցում մարդկանց միջև գոյություն ունեցող սոցիալական հարաբերությունները: Երբեմն ուսումնասիրում է առանձին հոգեբանական խնդիրներ՝ կատարելով անհրաժեշտ հետևություններ: Ըստ Կեսարացու շատ հաճախ մարդու արտաքինը խաբուսիկ է և անգամ ապակողմնորոշող, ուստի պետք չէ դատել մարդկանց մասին՝ ելնելով միայն արտաքին տվյալներից, քանի որ բարի թվացող արտաքինի տակ երբեմն թաքնված է լինում քստմենտի ներքին:

Մեծ ձգտում կա մարդու մեջ մարդկայինը վեր հանել, աշխատասիրություն արմատավորել: Այս նպատակով Կեսարացին մատնացույց է անում մրջյունի

բացառիկ ջանասիրությունը. «Եւ նմանեսցուք զոնէ մրջեանն, որ ամարայնույն պատրաստէ աշխատութեամբ զհամբարս ձմերայնոյ»¹:

Վկայակոչում է թռչունների, որոնք միմյանց օգնելու գեղեցիկ հատկություն ունեն և անհամեմատ ավելի բարի են ու ընկերասեր, քան այն մարդատյացները, «որ փակեն զդուրս ընդդէմ օտարաց, եւ ոչ կամին ընդունել յարկաւ զազգակիցս իրեանց ի ժամանակ ձմերայնոյ, զոնէ զհշերի իմիք տակաւ»²:

Կեսարացու նպատակը մարդուն վեհ ու կատարյալ տեսնելն է: Այդ իսկ նպատակով դրվատում է մեղունների միաբանությունը. «քանզի ի միասին կեան, եւ ի միասին գնան, միանգամայն ժողովին, եւ միանգամայն թռչին, ի միագործ ճեպեալ վաստակեն համօրէն...»³:

Երբ ծանոթանում ես Կեսարացու «Վեցօրեային», զգում ես, թե որքան ընդգրկում է ու բազմաբովանդակ: Ամենից հետաքրքրականը «Վեցօրեայի» արդիականությունն է: Կեսարացու խրատները, դիտողությունները, եզրակացությունները այնքան ճշմարտացի են և ուսանելի, որ կարելի է կիրառել այժմ մեր օրերի համար, ինչպես.

«Զի լաւ է աղքատութիւն, որ սակաւ ինչ ունիցի արդարութեամբ, քան զամենայն մեծութիւնս և զփափկութիւնս՝ զոր մեղօք ոք եւ անօրէնութեամբ ունիցի»⁴:

«Փախիցուք այսուհետեւ յամենայն կեղծաւոր խորամանկութեանց, եւ յամենայն կերպարանաւոր նենգաւորութեանց, եւ հաստատեալ կացցուք ի ստոյգ ճշմարտութեան, եւ յանպաճոյճ միանտութեան: Խորամանկութիւն օձից բարբ են»⁵:

Эмма Восканян

ВАСИЛИЙ КЕСАРИЙСКИЙ И ЕГО БИБЛИОГРАФИЧЕСКОЕ НАСЛЕДИЕ

Выдающийся библиограф Василий Кесарийский в мировой истории литературы отличается своим литературным наследием и христианской проповеднической деятельностью. Библиографы византийской литературы относили Кесарийского к ряду "трех великих кападокийцев". Он пользовался большою славой в христианском мире, без остатка посвятив свою жизнь укреплению и победе христианских ценностей. Библиографическое наследие этого выдающегося мыслителя и в XXI веке интересно и познавательно с точки зрения философских обобщений относительно человека и человеческих взаимоотношений, места и роли человека в природе. Закономерно, что непосредственно после создания армянской письменности Месроп Маштоц и его ученики предприняли перевод произведений Василия Кесарийского на золотой грабар. Традиционные ценности Кесарийского стали основой и стимулом для армянских библиографов классического и последующего периодов.

Emma Voskanyan

BASIL OF CAESAREA AND HIS BIBLIOGRAPHIC HERITAGE

In the world history of literature the prominent bibliographer Basil of Caesarea is well-known for his literary heritage and Christian evangelical activity. The bibliographers of Byzantine literature regarded Basil as one of "three great Cappadocians". He enjoyed great fame in the Christian world, dedicating his life to strengthening and victory of Christian values. In the 21st century the bibliographic heritage of this prominent thinker is still interesting and cognitive in view of philosophical generalizations concerning human being and human relations, the place and role of a human in society. It is logical that immediately after creation of Armenian alphabet Mesrop Mashtots and his pupils started to translate Basil of Caesarea's works into Golden Grabar (ancient Armenian). Basil's traditional values became a basis and stimulus for Armenian bibliographers of classical and further periods.

¹ Վեցօրեայ, էջ 187:

² Նույն տեղում, էջ 168:

³ Նույն տեղում, էջ 164:

⁴ Նույն տեղում, էջ 143:

⁵ Նույն տեղում, էջ 145:

¹ Վեցօրեայ, էջ 52: